ՀԱՐԹԱՇԵՆ

Վարչական ղեկավար՝ Գրիշա Գալստյան

Հեռ: 077 61 56 96

Մակերես՝ 29.5 կմ^2

Բնակչություն՝ 136

Ինդեքս՝ 2808

galstyangrischa@mail.com

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցք գյուղից 5-6կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 34 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Դյուզխարա, Դուզքենդ, Դուզքենդ Ներքին, Խըշ-Խըչ, Ղայղուլի, Ղայղուլի Դուզքենդ անվանումները: Հարթաշեն է վերանվանվել 1946 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ:

Գյուղը տեղակայված է փոքրիկ գետակի հովտում, հարթավայրում ՝ ծովի մակարդակից 2030մ բարձրության վրա: Կլիման ցուրտ լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքեր և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղում եղել են մասնակի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-իերկրաշարժից:
Գյուղն ունի կանգուն եկեղեցի: